

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
28-Ի N 2018-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2011 թվականի N 616-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
28-Ի N 2018-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններին հավասարեցված պաշտոնների ցանկը հաստատելու մասին» N 2018-Ն որոշմամբ հաստատված ցանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) «1. Գլխավոր խմբի պաշտոններ» աղյուսակի «Գլխավոր վարչության պետ, այդ թվում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ» պաշտոնին հավասարեցված պաշտոնի սյունակը լրացնել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատության պետ» բառերով.

2) «1. Գլխավոր խմբի պաշտոններ» աղյուսակի «Ինքնուրույն վարչության պետ, այդ թվում՝ մարզային վարչության պետ» պաշտոնին հավասարեցված պաշտոնի սյունակից հանել «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության պետ» բառերը.

3) «1. Գլխավոր խմբի պաշտոններ» աղյուսակի «Ինքնուրույն վարչության պետ, այդ թվում՝ մարզային վարչության պետ» պաշտոնին հավասարեցված պաշտոնի սյունակը լրացնել «ՀՀ ոստիկանության ուսումնական հաստատության ուսումնական կենտրոնի, քոլեջի, ակադեմիայի պետ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Տ. Մարգարյան

2011 թ. մայիսի 18 Երևան